ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

29 մարտի 2016 թվականի **թիվ 3** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումների VI հատորում փոփոխություն կատարելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մարտի 29-ի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում, առանձին ապրանքների մասով Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 27 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝

կիրառել Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումները (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի

2013 թվականի մարտի 12-ի թիվ 4 հանձնարարականի հավելված)՝ հաշվի առնելով փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մարտի 29-ի
թիվ 3 հանձնարարականի

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ,

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումների VI հատորում կատարվող

39-րդ խմբի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «3924 90 000 0» ստորաենթադիրքի պարզաբանումները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3924 90 000 1 Վերականգնված թաղանթանյութից

Տվյալ ստորաենթադիրքի մեջ ներառվում են սպունգներ՝ վերականգնված թաղանթանյութից, ձեւերով կտրատած, բացի ուղղանկյունաձեւից (ներառյալ քառակուսին), այլ եղանակով հղկված կամ չհղկված, մշակված կամ չմշակված եզրերով։

Տվյալ ստորաենթադիրքում չեն ներառվում՝

ա) սպունգներ՝ բնական (0511 99 310 0 եւ 0511 99 390 0 ստորաենթադիրքեր).

բ) սպունգներ՝ պարզապես ուղղանկյունաձեւ կտրատած (ներառյալ քառակուսիները) (3921 ապրանքային դիրք)։»։